# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» դեկտեմբերի 2019թ.
ժամը 10⁰⁰-ին

***Մասնակցում էին՝***
***Հանձնաժողովի նախագահ՝***
<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)</u>
Սուրեն Շախվերդյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի օգնական
<u>Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)</u>
Սասունիկ Պետրոսյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ավտոմատ կառավարման և տեղեկատվական համակարգերի վարչության ծրագրերի, սարքերի և ցանցերի ապահովման բաժնի պետ
Մարիամ Բաղդասարյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի Իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ
<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)</u>
Սարգիս Սարգսյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության հաշվապահական բաժնի առաջատար մասնագետ
Արտակ Սարգսյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ավտոմատ կառավարման և տեղեկատվական համակարգերի վարչության ծրագրերի, սարքերի եւ ցանցերի ապահովման բաժնի առաջատար մասնագետ
***Հանձնաժողովի քարտուղար՝***
<u>Գնման Պատասխանատու /Մրցույթի Համակարգող (ԳՊ/ՄՀ)</u>
Արմենուհի Մանուչարյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության բյուջետային կառավարման և գնումների բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի նախահաշվային գնի մասին.**

1.1 ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

**2. Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

**2.1** ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2019թ. դեկտեմբերի 5-ին armeps.am, gnumner.am պաշտոնական կայքերում:

**2.2** ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ու հայտարարության փոփոխություն չի կատարվել:

**2.3** Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. դեկտեմբերի 12-ը ժամը 10:00-ը:

**3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

3.1 Հայտերը բացվել են armeps.am համակարգի միջոցով դեկտեմբերի 12-ին ժամը 10:00-ին: ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

**Չափաբաժին 1**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ապրանքի անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մելիքսեթ Ավետիսյան Ղազարի Ա/Ձ | meliqsetavetisyan3@gmail.com | Սեղանի համակարգիչ | 6 420 000 | 6 420 000 |
| 2 | Հպարտ Քաղաքացի ՍՊԸ | hpartqaxaqaci@gmail.com | Սեղանի համակարգիչ | 4 700 000 | 5 640 000 |
| 3 | Ա/Ձ Կարինե Գաբրիելյան | karine.gabrielyan01@yandex.ru | Սեղանի համակարգիչ | 4 170 000 | 4 170 000 |

Չափաբաժին 2

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ապրանքի անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հպարտ Քաղաքացի ՍՊԸ | hpartqaxaqaci@gmail.com | Սեղանի համակարգիչ | 11 940 000 | 14 328 000 |
| 2 | Այ-Թի Թրեյդինգ ՍՊԸ | artak.abrahamyan@ittrading.am | Սեղանի համակարգիչ | 12 441 220 | 14 929 464 |

Չափաբաժին 3

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ապրանքի անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մելիքսեթ Ավետիսյան Ղազարի Ա/Ձ | meliqsetavetisyan3@gmail.com | Լազերային տպիչ | 2 670 000 | 2 670 000 |
| 2 | Այ-Թի Թրեյդինգ ՍՊԸ | artak.abrahamyan@ittrading.am | Լազերային տպիչ | 2 275 250 | 2 730 300 |

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**4.1** ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերով սահմանված կարգով բոլոր մասնակիցների կողմից ներկայացվել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Տեղեկատվություն՝ Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

**5.1** ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

**6. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ Հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

**6.1** Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանել Հրավերով սահմանված կարգի պահանջներին, հետևաբար մասնակիցներին ծանուցվել է պատշաճ ժամկետում /մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել հայտերում առկա անհամապատասխանությունները և շտկված տարբերակները ուղարկել Պատվիրատուի monmanucharyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Միաժամանակ ընթացակարգի բոլոր մասնակիցներին ծանուցվել է ներկայանալ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, որոնց անցկացման համար օր է նշանակվել 17.12.2019թ., ժամը 10:00-ը, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեն: Հանձնաժողովը նիստը կասեցվել է մինչև մասնակիցների կողմից անհամապատասխանությունների շտկումը:

**7. Նիստը վերսկսելու վերաբերյալ.**

7.1 Հանձնաժողովի նիստը վերսկսվել է 16.12.2019թ. ժամը 10:00-ին: Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում մասնակիցների կողմից հայտերում առկա անհամապատասխանությունները շտկվել են, հետևաբար Հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

**8. Տվյալներ միաժամանակյա բանակցությունների և նիստը վերսկսելու վերաբերյալ.**

**8.1** Միաժամանակյա բանակցությունները անցկացվել են 17.12.2019թ., ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում: Բանակցություններին ներկայացել է միայն Հպարտ Քաղաքացի ՍՊԸ-ն: Արդյունքում մասնակցի գնային առաջարկը ստացավ հետևյալ տեսքը՝

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ապրանքի անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հպարտ Քաղաքացի ՍՊԸ | hpartqaxaqaci@gmail.com | Սեղանի համակարգիչ | 4 150 000 | 4 980 000 |
| 2 | Հպարտ Քաղաքացի ՍՊԸ | hpartqaxaqaci@gmail.com | Սեղանի համակարգիչ | 11 320 000 | 13 584 000 |

**9. Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ առաջին և երկրորդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել *Հպարտ Քաղաքացի ՍՊԸ-ին,*

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ երրորդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել *Այ-Թի Թրեյդինգ ՍՊԸ-ին,*

3) Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետ 17.12-23.12:

4) Անգործության ժամկետի ավարտից հետո էլ. փոստի և armeps.am համակարգի միջոցով ծանուցել առաջին և երկրորդ չափաբաժինների ընտրված մասնակից Հպարտ Քաղաքացի ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից Այ-Թի Թրեյդինգ ՍՊԸ-ին ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով պայմանագրերի նախագծերը, որոնք կկնքվեն մասնակիցների կողմից պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

5) Գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվելու է պայմանագրերը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները՝**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի** | | |
| **Նախագահ՝** | | **Սուրեն Շախվերդյան** |
| **անդամներ՝** | | **Սասունիկ Պետրոսյան** |
| | | **Մարիամ Բաղդասարյան** |
| | | **Սարգիս Սարգսյան** |
| | | **Արտակ Սարգսյան** |
| **քարտուղար՝** | | **Արմենուհի Մանուչարյան** |